Նախադպրոցական Ուսումնական Հաստատության

Մանկավարժական Աշխատողների Վերապատրաստում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ավագ նախադպրոցականի գեղարվեստախոսքային (հանդեսներ, տոնակատարություններ) մանկավարժական գործունեության պայմանները

Վերապատրաստվող՝ Հռիփսիմե Նուբար Առաքելյան

Շիրակի մարզ, «Բասենի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Վերապատրաստող՝ Նարինե Սահակյան

Բովանդակություն

Ներածություն 3

Տեսական մաս 6

Գլուխ 1 6

1.1Ազգային տոների և տոնակատարությունների նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և գեղարվեստախոսքային մշակույթի ձևավորման գործում 6

1.2Հանդեսներ և տոնակատարություններ 10

Գործնական մաս 13

Գլուխ 2 Սուրբ Զատիկի տոնակատարություն 13

Եզրակացություն 17

Գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն միջոց է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռման: Երեխան մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Նախադպրոցական հաստատության խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցման ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը: Խոսքի զարգացման մեջ իր առանձնահատուկ տեղն ունի նաև գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը՝ որպես երեխայի խոսքի հարստացման աղբյուր: Խոսքի ուսուցումը անահատի ձևավորման, ազգային մշակույթի յուրացման հիմնական տարրերից է, սերտորեն շաղկապված մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակության հետ: Չպետք է մոռանալ, որ լեզուն մյուս բոլոր բնագավառներից գիտելիքների հաղորդման և տիրապետման միջոց է:

Խաղը երեխայի ամենակարևոր գործունեությունն է : Երրեխան խաղով է ընկալում ինքն իրեն, աշխարհը և շրջապատը: Յուրաքանչյուր իր երեխան կարող է ներկայացնել խաղով ու դերախաղով , ցանկացած գործունեություն վերածել ներկայացման:

Բարեկիրթ խոսքի մշակույթը ոչ միայն ճիշտ, գրական լեզվի և չափանիշներին համապատասխան մակարդակով խոսելու կարողունակությունն է, այլև գեղեցիկ, ներգործող, տպավորիչ հաղորդակցվելու ունակությունը՝ հաշվի առնելով խոսակցին, խոսակցության նպատակը, վայրը և այլն:

Կապակցված խոսքին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա)խոսելու նյութի մասին գիտելիքների, տեղեկությունների առկայությունը,

բ) խոսքի կառուցվածքի պարզությունը, մտքերի հետևողականությունը ու հստակությունը,

գ) թեմայի բացահայտման տրամաբանությունը,

դ) խոսքի բառամթերքի ճիշտ ընտրությունը և դիպուկությունը,

ե) արտահայտչամիջոցների ճիշտ ընտրությունը,

զ) տվյալ լեզվի գրական նորմերին համապատասխանությունը:

Այս համատեքստում շատ կարևոր է նաև ծանոթացում գեղարվեստական գրականության հետ: Ծանոթանալով գիտական ստեղծագործության հետ երեխան ծանոթանում է ժողովրդի մշակութային ավանդույթներին, հասարակության պատմության ընթացքին: Գեղագիտական ստեղծագործությունը երեխաներին ստիպում է ապրել հերոսների կյանքով, հուզվել նրանց հետ, փորձել նմանվել դրական կերպարներին:

Խոսքի արվեստը ստեղծագործությունների միջոցով երեխաների մեջ ձևավորում է ճանաչել իրական կյանքը, մարդկային փոխհարաբերությունները:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը առնչվում է հնչյունների յուրացման և արտաբերման հետ, ինչը նախատեսում է՝

- Խոսքային լսողության զարգացում,
- Ճիշտ հնչարտաբերում
- Խոսքի արտահայտչական միջոցների տիրապետում (ուժգնություն, հնչերանգ, տեմպ):

Խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի նաև գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այն մեծ նշանակություն ունի երեխայի անձի ձևավորման համար, որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշար, զարգացնում է պատկերավոր խոսքը, գեղագիտական ճաշակը, գեղարվեստախոսքային մշակույթը և նպաստում է բարոյական հասկացությունների ձևավորմանը:

<u>Հետազոտական աշխատանքի նպատակն է</u> տոնակատարությունների և հանդեսների միջոցով զարգացնել երեխաների գեղարվեստախոսքային մշակույթը, ստեղծել առարկայական միջավայր տոնակատարությունները կազմակերպելու համար: Բացահայտել ազգային տոների ու ծեսերի նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների կրթադաստիարակչական գործընթացում,

դրանց պահպանման և հանրակրթության մաս դարձնելու դրական կողմերը, ինչպես նաև ուսումնասիրել տոներին և ծիսակարգերին նվիրված տեսական գրականությունը, ներդնել երկարամյա մանկավարժական փորձս ի նպաստ երեխաների գեղարվեստախոսքային մշակույթի զարգացմանը, առաջադրել նախադպրոցական տարիքի երեխաների պատկերացումները ազգային մշակույթի, օրացույցային տոներին, տոնակատարություններին, ծեսերին, ավանդույթներին, արվեստի և արհեստների վերաբերյալ խնդիրների լուծման մանկավարժական առանձնահատկությունները:

Հանդեսները դիտարկել, որպես երեխաների ստացած գիտելիքների հավետվություն՝ երեխաների մեջ սերմանելով ազգային մշակույթի կրողը, սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողությունը:

<u>Մեր առջև դրված նպատակներին հասնելու համար սահմանել ենք հետևյալ խնդիրները՝</u>

- Նկարագրել ազգային տոների և ծեսերի նշանակությունը հանրակրթության ոլորտում, ներկայացնել այդ աշխատանքների բարելավման, կատարելագործման հիմնական ուղղությունները,
- Հատուկ կահավորված խմբասենյակում երեխաներին ծանթացնել ազգային մշակութային ակունքներին,
- Իրականացնել «սերունդների խաչմերուկ» ծնող-երեխա-եկեղեցի կապը՝ ծնողներին, հատկապես տատիկ-պապիկներին, ներգրավել ուսումնական գործընթացին,
- Ներկայացնել մանկավարժական այնպիսի պայմաններ, որոնք միտված կլինեն բարձրացնել հետաքրքրությունն ու սերը ազգային մշակույթի, ժողովրդական արվեստի, սովորությունների, ավանդույթների, ծեսերի, ժողովրդական օրացույցային տոներին, ժողովրդական խաղերի, ասիկների, երգերի, գեղարվեստական և գիտական ստեղծագործությունների նկատմամբ:

Հետազոտական աշխատանքը բացի բովանդակային մասից ներառում է նաև փորձարարական մաս, որտեղ ներկայացրել եմ մեր կողմից իրականացված տոնակատարության /հանդեսի/ օրինակ:

Աշխատանքի ընթացքում կիրառել եմ հետևյալ մեթոդները.

- Իրավիճակների խաղարկում,
- Դերախաղ,
- Խմբային աշխատանք:

Գլուխ 1. Ազգային տոների և տոնակատարությունների նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և գեղարվեստախոսքային մշակույթի ձևավորման գործում

1.1 Մանկավարժական պայմանները

Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքը, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին, գրականությանը, ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին, ժողովրդական բանահյուսությանը երեխային ծանոթացման ընթացքում:

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով և տիպերով: Հասարակությունն օգտագործում է որոշակի պատմական դարաշրջանների, հասարակական-տնտեսական ֆորմացիաների, կոնկրետ հասարակարգերի, ազգությունների, ազգերի, ինչպես նաև կյանքի և գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու համար: Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր են զբաղեցնում ավանդույթներն ու ծեսերը:

Ազգային ավանդույթը մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում:

«Ավանդույթ» հասկացությունը ստուգաբանորեն նշանակում է փոխանցում, հաղորդում (լատիներեն tradition (որպես բայ՝ trader)նշանակում է «փոխանցել»):
Իմաստաբանական նշանակությունը հստակորեն մատնանշում է, որ «ավանդույթ»-ը ամենից առաջ այն է, ինչը ոչ թե անհատի կողմից կամ նրա գործունեության արդյունքում է ստեղծվել այլ փոխանցվել է ուրիշներից և որպես այդպիսին միայն իրեն չի պատկանում:
Այսպիսով ամենալավ ըմբռնմամբ՝ ավանդույթն այն ամենն է, ինչը ժառանգվում է նախնիներից: Ավելի նեղ սահմանման դեպքում ավանդույթը դիտվում է, որպես սոցիալական փորձի (գիտելիք, ապրում, վարքագիծ) կայուն ձևերի ամրագրում արմատավորում փոխանցում և վերարտադրություն: Մեկ այլ դեպքում ավանդույթ համարվում է սոցիալական փորձի պահպանման, փոխանցման, վերարտադրման մեխանիզմը: Ժամանակի փոփոխությունները հաճախ ստիպում են հետին պլանում թողնել մի շարք ազգային տոներ և ծեսեր: Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչ մասն է: Յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով հանգում ենք ծեսերի վերացմանը:
Ազգային տոների պահպանումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Երեխաները ծանոթանում են ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային,
- Սովորում են ծիսական երգեր, խաղերգեր ու ասիկներ,
- Երգերի միջոցով հաղթահարում են բարբառային դժվարությունները,
- Երեխաները դաստիարակի օգնությամբ ստեղծում են ծիսական միջավայր,
- Մասնակից են դառնում ծիսակարգին,
- Արդյունքում վերականգնվում է տոնն իր ամբողջ ծիսակարգով:

Այդ պատճառով ճիշտ ենք համարում վաղ տարիքից երեխաներին ծանոթացնել ազգային տոներին, նրանց մոտ ավելացնել շրջակա աշխարհի մասին պատկերացումները:
Վաղ տարիքի երեխաները հաճախ են դիտում օտարալեզու մուլտֆիլմեր, հաղորդումներ (Like Nastya Влад и Ники և այլն), որտեղ բացի կենցաղից,

ներկայացնում են նաև իրենց մշակույթը և այդպես այդպես անընդհատ դիտելով այդ, երեխաները իրենց վրա են կրում օտար մշակույթի ազդեցությունը (Halloween, Thanksgiving Day և այլն):

Ուստի խնդիրը հատկապես հրատապ է՝ երեխաների մեջ սեր սերմանել ազգային մշակույթի հանդեպ, նրանց ծանոթացնել նրա ծագմանը, սովորույթներին, ավանդույթներին: Հենց նախադպրոցական տարիքն է այն ժամանակաշրջանը, երբ հնարավոր է իրական անկեղծ ընկղմվել ազգային մշակույթի ակունքներում:

Նախադպրոցական տարիքում երեխաներին ազգային տոներին սկսել ենք ծանոթացնել «Տարվա եղանակները» թեման ուսումնասիրելու ժամանակ՝ կիրառելով խմբային աշխատանքի մեթոդը: Թեմայի ուսուցման ընթացքում երեխաներին բաժանեցինք երեք-չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին տվեցինք նկարներով քարտեր (հիմնականում իրենց ծանոթ տոների)պատկերված՝ Ամանոր, Սուրբ Զատիկ, Ծաղկազարդ, Մայրության և գեղեցկության, Անկախության և այլ տոներ:

Հանձնարարվեց երեխաներին ուշադիր ուսումնասիրել քարտերը և յուրաքանչյուր տոն տեղադրել նախապես փակցված պաստառի վրա, որտեղ պատկերված են տարվա չորս եղանակները:

Այսպես կապելով տոնը տարվա եղանակի հետ, ստացանք հետևյալ պատկերը: Ձմռան պատկերով նկարին երեխաները տեղադրեցին Նոր տարին, Սուրբ Ծնունդը, գարնան պատկերով նկարին երեխաները տեղադրեցին Ծաղկազարդը: Ամռան պատկերով նկարին երեխաները տեղադրեցին Վարդավառը, իսկ աշնան պատկերով նկարին տեղադրեցին Տյառնընդառաջը, Անկախության տոնը պատկերած քարտերը:

Այնուհետև երեխաներին ներկայացրեցինք, որ դրանք բոլորը ազգային տոներ են, որոնք ունեն իրենց նշելու նշանակությունը, ժամանակը, և որ ունենք բազմաթիվ ազգային տոներ և ծեսեր, որոնք թեև չեն նշվում, սակայն չեն մոռացվել և որ այդ տոների և ավանդույթների պահպանողն ու շարունակողը, փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ իրենք են լինելու: Երեխաները գիտակցում են թե ինչ սեզոնային փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ, ինչպես է փոխվում մարդկանց կյանքը՝ աշնանը կարելի է գնալ բերքահավաքի և կազմակերպել

տոնակատարություն «Բերքի տոն», ձմռանը սահել չմուշկներով, սահնակով և դահուկներով, խաղալ ձնագնդի և տոնել Ամանորը և Սուրբ Ծնունդը:

Տոներն ավարտվում են ավանդական տոնական ուտեստներով՝ հյուրասիրությամբ: Սուրբ Զատիկի համար՝ ներկած ձու, զատկական փլավ, Ամանորին ՝ քաղցրավենիք ընդեղեն և այլն: Մեր նպատակն է ծանոթացնել ազգային տոներին, դրանց նշանակությանը, ինչպես նաև երեխաների հիշողության մեջ թողնել ազգային տոների անմոռանալի ուրախությունն ու ջերմությունը, ավելի լավը, բարի դառնալու ցանկությունը:

Կյանքի յուրաքանչյուր շրջանին բնորոշ են տարբեր տոներ, մինչդեռ դրանցից մեկը գալիս է ու գնում, իսկ մյուսները դարեր շարունակ պահպանում են իրենց գոյությունը: Որոշ ազգային տոներ կապված են բնական փոփոխությունների հետ (ձմեռը՝ ճանապարհելը, գարունը՝ դիմավորելը), մյուսները կրոնական օրացույցի (Սուրբ Ծնունդ, Աստվածհայտնություն, Սուրբ Զատիկ, Խաչվերաց, Վերափոխումն Սուրբ Աստվածածնի, Վարդավառ):

Յուրաքանչյուր տոն ունի իր սովորությունները, ավանդույթները և այլն: Դրանք համախմբում են հարազատներին, օգնում մարդուն գիտակցել իր ազգային ինքնությունը;

Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա երեխաներին պարզել, թե իրենց նախնիները ինչ հագուստով են մշակել հողը, ինչ հանդերձանքով են նստել սեղանի շուրջ, և ինչ տարազով են կատարել տոնական արարողությունները:

Աշունը բերքահավաքի և թռչունների հեռանալու ժամանակն է: Մեր նախնիները նշել են աշնանային բազմաթիվ ժողովրդական տոներ, կատարել ծեսեր: Հիմնականում դրանք բոլորը նվիրված էին երախտագիտությանը՝ բերքի համար: Աշնանը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Խաչվերացի տոնը, որը տաղավար հինգերորդ և վերջին տոնն է: Հիմնական ձմեռային ազգային տոնը Նոր տարին է : Տարվա այս եղանակին նշվում է նաև տաղավար տոներից Սուրբ Ծնունդը և Աստվածհայտնությունը, Տեառնընդառաջը: Տարվա հաջորդ եղանակը գարունն է: Գարնան ամենապայծառ տոներից են ՝ Սուրբ Զատիկը, Ծաղկազարդը, Մայրության և գեղեցկության տոնը (Ավետման տոն): Ամռանը տոնում ենք Վարդավառը:

Կատարված պարապմունքների արդյունքով ավագ խմբի երեխաները բավականին շատ պատկերացումներ կազմեցին տոների վերաբերյալ: Իսկ արդեն հանդեսներն ու տոնակատարությունները, որոնք համեմված էին ժողովրդական տոնին բնորոշ երգերով, պարերով, խաղիկներով, գեղարվեստական խոսքով ասիկներով, լայն հնարավորություն ստեղծեցին երեխաների համար, ծանոթանալու ժողովրդական մշակույթի ակունքներին: Սա չափազանց կարևոր է ներկա ժամանակաշրջանում, երբ նյութական արժեքները գերակայում են հոգևոր արժեքներին և խեղաթյուրված են երեխաների պատկերացումները բարության, գթասրտության, առատաձեռնության, արդարության, հայրենասիրության մասին: Այսպիսով, ազգային տոներն օգնում, են երեխաներին զգալ իրենց ժողովրդի մի մասը, սովորել նրա ավանդույթները, զարգացնել ստեղծագործական կարողությունները: Այս տոները պատկերացում են տալիս ժողովրդական հավատալիքների, ավանդական ծեսերի և հայ գյուղացու առօրյայի մասին: Նրանք սովորեցնում են նուրբ վերաբերմունք բնության, իրենց հայրենի հողի, իրենց նախնիների, և ժողովրդի պատմության նկատմամբ:

1.2 Հանդեսներ և տոնակատարություններ

Տոնական հանդեսների և զվարճալիքների կազմակերպումն ու անցկացումը մանկապարտեզում տարվող մանկավարժական աշխատանքների կարևոր մասն է: Նրանց շնորհիվ իրագործվում է երեխաների բարոյական մտավոր, գեղագիտական, աշխատանքային ֆիզիկական դաստիարակության խնդիրները: Տոնական հանդեսների և տոնակատարությունների նախապատրաստումն ու ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության գործին: Երեխաները համախմբվում են, ապրում ընդհանուր հետաքրքրություններով, նրանց մեջ մշակվում է վարվելակերպի կուլտուրա, կարգապահություն: Մեծ է ժողովրդական ստեղծագործությունների, հայրենիքի, ու բնությանը, աշխատանքին նվիրված երգերի ու բանաստեղծությունների դերը հայրենասիրական ազնիվ զգացմունքների զարգացման գործում: Տոնահանդեսների ու զվարճանքների համար սովորած

երգերը, բանաստեղծությունները ոչ միայն մշակում են գեղարվեստական ճաշակ, այլև օգնում են հաղորդակցվելու տարբեր ազգերի մշակույթին:

Այս ամենը ընդլայնում է երեխաների մտահորիզոնը, զարգացնում է հիշողությունը, երևակայությունը, խոսքը, որն այնքան կարևոր է այդ տարիքի երեխաների համար, նպաստում է նրանց մտավոր զարգացմանը: Տոնական հանդեսների ու զվարճանքների նածապատրաստումն ու անցկացումը իրագործվում է պլանավորված և պարբերաբար չխանգարելով մանկապարտեզի ընդհանուր աշխատանքներին: Կազմակերպվող ամեն մի տոնական հանդես ու զվարճանք պետք է ունենա որոշակի նպատականուղղվածություն:

Երեխան պետք է զգա ու հասկանամ թե ինչի համարն է կազմակերպվում այս կամ այն հանդեսը: Տոնի համար ընտրված նյութերը՝ երգեր, պարեր, բանաստեղծություններ, երաժշտություն, բեմականացում, գեղարվեստական ձևավորում, պետք է արտահայտի տոնի հիմնական իմաստը: Ընտրված նյութը պետք է բավարարեն դաստիարակչական ու ուսուցողական խնդիրներին, ունենան գեղարվեստական արժեք, լինեն մատչելի երեխաների կատարման համար: Կազմակերպված տանակատարությունը ավագ և նախադպրոցական խմբերում կարող են տևել 45-55 րոպե: Տոները կապված են ուրախութուն պատճառելու երեխաներին, ուստի ծրագիրն այնպես պետք է կազմել, հանդեսին մասնակցեն բոլոր երեխաները՝ յուրաքանչյուրն ըստ իր կարողությունների: Նախադպրոցական հիմնարկներում հանձնարարվում են նշել հետևյալ տոները՝ ՀՀ-ի Անկախության օրը, Ամանոր, Հարության տոնը, Մայրության և գեղեցկության տոնը, Համբարձման տոնը, Վարդավառը, Ծաղկի տոնը:

Երեխաներին դպրոց ճանապարհելը նշվում է ուրախ ցերեկույթի ձևով: Տոնի նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունը ընկնում է ողջ մանկավարժական կոլեկտիվի վրա: Երաժշտական դաստիարակը խմբի դաստիարակի հետ միասին տոնակատարությունից մոտավորապես 1 ամիս առաջ կազմում է ծրագիրը, ընտրված նյութերը ուսուցանվում են համապատասխան պարապմունքներում՝ երաժշտական, մայրենի լեզվի, այպես, որ միչև տոնակատարության օրը դրանք լրիվ յուրացվում են երեխաների կողմից: Տոնակատարությունն անցկացվում է աշխույժ: Տոնի նախապատրաստական

աշխատանքներին կարելի է մասնակից դարձնել նաև ծնողներին: Ամենամեծ պարտականությունն ընկնում է տոնահանդեսը վարողի վրա: Տվյալ դաստիարակը պետք է ունենա բարձր կուլտուրա, պետք է լինի հնարամիտ, ուրախ և լավ գիտենա խմբի երեխաների կարողություններն ու հնարավորությունները, լինի անմիջական շփվող, կարողանա իրեն անկաշկանդ պահել, ստեղծել ջերմ մթնոլորտ: Հաջորդ պարապմունքների ժամանակ կրկնում են տոնական երգերն ու ասիկները, պարում են պարերը: Տոնակատարության նախապատրաստական աշխատանքներում ներգրավվում են նաև երեխաները: Երեխաներին են տրամադրվում տարբեր պարագաներ՝ գլխարկներ, թաշկինակներ, դիմակներ և հնարավորություն ստեղծում որպիսի երեխան ստեղծագործական խաղերի ժամանակ ցույց տա իր սեփական մտահղացումը: Դաստիարակը պետք է լինի մոտիվացնող և քաջալերող և ստեղծի միջավայր երեխաների ստեղծագործական երևակայությունը զարգացնելու համար: Տոնակատարություններին և հանդեսների կազմակերպումը, բացի հետաքրքիր և տպավորիչ լինելուց, զարգացնում է մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևեր:

Պարապմունքների ժամանակ կիրառել եմ հետևյալ մեթոդները.

- Իրավիճակների խաղարկում
- Դերախաղ
- Խմբային աշխատանք

Մեր առջև դրված է խնդիր՝ որոնել ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնց շնորհիվ կկարողանանք լուծել գերխնդիրը, այն է.

1. Երեխան պետք է ոչ միայն սովորի այլ ապրի այդ տոնակատարությունը
2. Մանկապարտեզի տարիներից այն պետք է դառնա նրա կյանքի ու կենցաղի անբաժանելի մասը
3. Երգն ու պարը դառնան ոչ թե սոսկ դաս, այլ իր հույզերն ու զգացմունքները դրսևորելու բնական միջոց
4. Տոնը պետք է ոչ թե բեմադրվի, այլապրվի, որ երեխան ինքը դառնա տոնի, ծեսի, ծիսակատարության ոչ թե հանդիսատես,այլ մասնակից:

Վերը նշված նպատակների իրականացման համար ավագ խմբում կազմակերպվել են մի շարք հանդեսներ ու տոնակատարություններ (Սուրբ Ծնունդ և Աստվածհայտնություն, Հարության տոն, Տյառընդառաջ, Ծաղկազարդ և շատ այլ տոներ):

Սրանցից կառանձնացնեմ Սուրբ Զատիկի տոնին նվիրված միջոցառումը: Միջոցառմանը կենտրոնական տեղ ենք հատկացրել երեխաների հետարքրություններին, որը խթանեց երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը:

Միջացառման ծրագրման ժամանակ հաշվի են առնվել հետևայլը.

- Թեմայի համապատասխանությունը երեխաների հետաքրքրություններին,
- Երեխաների երևակայության և ստեղծագործական մտածողության խթանում,
- Երեխաների համագործակցության և որոշակի պատասխանատվություն կրելու հնարավորության ընձեռում,
- Ստեղծել պայմաններ երեխաների կողմից ձեռք բերված գիտելիքներն և հմտություններն ինքնուրույն արտահայտելու համար
- Գիտելիքների համալրում և փորձ՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Գործնական մաս

Գլուխ 2. Սուրբ Զատիկի տոնակատարություն

Քրիստոնեական տաղավար տոներից մեկը՝ Զատիկը, մանկապերտեզում վերածվում է մի շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակ է:

Կարևոր է, որ տոնակատարոթյունը կազմակերպելիս պահպանվի ծիսակարգը և երեխաներին ընկալելի դառնա դրա բովանդակությունն ու աստվածային խարհուրդը:

Զատիկը հեթանոսական տոն լինելով, հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը և բեղմնավորումը: Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն, ինչպես և կենաց ծառը հին հայերը վերնագրում էին մեռնող և հարություն առնող բնության

Աստծուն՝ Արային: Հետագայում այս տոնը քրիստոնեական օրացույցում արժևորվեց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ: Արդեն երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհի մարդիկ Սուրբ Զատիկի օրը իրար ավետում են. «Քրիստոս Հայրավ ի Մեռելոց» և լինում է պատասխանը. «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:
Այս միջոցառման անկացումը տևում է մեկ շաբաթ: Տոնակատարությունը և մեծերի և երեխաների համար է: Դրա հիմնական մասնակիցները դառնում են ծնողներն ու երեխաները

Թեմա – Սուրբ Զատիկ

Նպատակը- Երեխաներին ծանոթացնել մեր ազգային՝ Սուրբ Զատկի տոնին: Ծանոթացնել տոնի գեղեցիկ սովորություններին, կենցաղային ավանդույթներին, ազգային՝ զուտ հայկական ուտեստների պատրաստմանը և հյուրասիրման տարրերին:
Մասնակից դարձնել ծնողներին՝ հատկապես ավագ տատիկներին:
Երեխաների մեջ դաստիարակել սեր ու հարգանք ազգային տոների և ավանդույթների նկատմամբ:

Ընթացքը- Տոնին նախապատրաստվելու համար երեխաները իմ օգնությամբ մատուցարանների մեջ ցանեցին ցորեն: Դրանց կանաչ ծիլերը օգտագործեցինք սպասք ձևավորելու և ածիկ ձևավորելու համար:

Ավագ երկուշաբթի- Երեխաները պատրաստեցին զատկի թեմայով բացիկներ, կոլաժներ, նկարում են նկարներ:

Ավագ երեքշաբթի- Զբոսանքի ժամանակ երեխաները մոտակա պուրակից բերեցին ուռենու ճյուղեր՝ տոնական զարդարանքի համար:

Ավագ չորեքշաբթի-Երեխաները մի քանի մայրիկների, իմ և խոհարարի հետ հետճաշիկից հետո խոհանոցում պատրաստեցին հայկական կլոր գաթա, փոխինձ և հալվա:

Ավագ հինգշաբթի-Հետճաշիկից հետո երեխաները մի քանի տատիկների և խոհարարի օգնությամբ թակիչով ծեծեցին ծլած ցորենի ծիլերը, հյութը քամեցին և խառնեցին ալյուրի շփոթին և դանդաղ խառնելով եփեցին մեր ավանդական, նախապապերի, նախատատերի սիրած կերակրատեսակներից մեկը՝ ածիկը:

Ավագ ուրբաթ- Մեր ծնողներից մեկի հրավերով երեխաները իմ ուղեկցությամբ կատարեցին այցելություն: Տանը մասնակցեցին խնոցի հարելու արարողությանը: Արարողության ժամանկ երեխաները երգում էին իրենց սովորած «Խնոցի ջան, խնոցի»-ն և ստացած կարագն ու թանը վերցնելով վերադարձան մանկապարտեզ:

Ավագ շաբաթ-Այդ օրը երեխաները ծնողի հրավերով և իմ ուղեկցությամբ այցելեցին հացատուն և ականատես եղան թոնրի մեջ հացի թխման արարողությանը: Նրանք երգում էին «Լավաշ ենք թխում», երգը, ճաշակում հյուրասիրած հացն ու պանիրը: Վերցնելով լավաշները վերադարձան մանկապարտեզ:

Այդ օրը իմ և խոհարարի օգնությամբ սոխի կճեպներով և այլ նյութերով ներկեցինք խաշած ձվերը: Տներ այցելելու արարողությունը հատուկ նպատակ է հետապնդում: Հայտնի է, որ գյուղերում շատ քիչ ընտանիքներում են պահպանվել իսկական խնոցի և թոնիր, դրանք փոխարինվել են ժամակակից սարքավորումներով: Ցանկացա, որ երեխաները տեսնեն հնագույն այդ մասունքները, որովհետև, վաղ թե ուշ դառնալու են հուշ և պատմություն ու կմտնեն թանգարան: Իսկ երեխաների հիշողության մեջ կմնա իրենց նախատատերի աշխատանքային կենցաղը: Թե՛ մեծերը, թե՛ փոքրերը անհամբերության սպասում էին կիրակի օրվան: Այդ օրը՝ Զատիկին, երեխաները ուռենու ճյուղեևով, զատկի թեմայով նկարներով, կոլաժներով, ծնողների և իմ օգնությամբ զարդարեցին մանկապարտեզի դահլիճը և մուտքը:

Սեղանի զուտ հայկական ուտեստներն էին՝ լավաշ, պանիր, խնոցու կարագ, ածիկ, հալվա, գաթա, փոխինձ, բրձով և չամչով փլավ, զամբյուղով գունավոր ձվեր, որոնք դրված էին նախորոք աճեցրած կանաչ խոտի մեջ և հանդիսանում էին օրվա խորհրդանիշ:

Սկսվում է հանդեսը: Երեխաները կազմեցին խաչի տեսարան և արտասանեցին տերունական աղոթքը: Այնուհետև ավետում են. «Քրիստոս Հայրավ ի Մեռելոց»: Հնչում է պատասխանը. «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»: Իմ օգնությամբ վառվեցին լույսերը և մոմերը: Երեխաները արտասանում են, երգում, պարում, ներկայանում փոքրիկ բեմականացմամբ: Բոլոր ելույթներում կարմիր թելի նման անցնում է զատկական թեման: Այնուհետև հաջորդեցին հանելուկները: Դրանց խանդավառությամբ պատասխանում էին նաև տատիկները և ստանում իրենց թոռնիկներից մրցանակները՝ բացիկները: Մեծ ոգևորություն էր տիրում դահլիճում,

մրցակցությանը մասնակցում էին նաև մանկապարտեզի ողջ անձնակազմը: Դրան հաջորդեցին ձվերի խաղը և «քարկտիկ» ազգային խաղը:

Նշեմ նաև, որ հյուր եկավ ակլատիզն իր փետուրներով: Միջոցառման վերջնակետը դարձավ հայկական ժողովրդական պարը, որին մեծ խնդավառությամբ մասնակցեցին տատիկները, բոլոր մեծերը և փոքրերը:

Եզրակացություն- Հրաշալի տրամադրությունք ավարտվեց մեկշաբաթյա միջոցառումը: Այդ ընթացքում երեխան գործեց ազատ, անկաշկանդ, ինքնավստահ, տանտիրոջ իրավունքով: Չէ՞, որ ինքն է մասնակցել բոլոր աշխատանքներին, ինքն է իր տատիկին առաջնորդել, հյուրասիրել, մրցանակ շնորհել:

Երեխայի մեջ ձևավորվեց ինքնագնահատականը, ինքնահաստատման և արժանապատվության զգացումը:

Զատկի, ինչպես նաև Համբարձման և Վարդավառի տոնակատարությունները սրտամոտ են երեխաներին: Դրանք հայեցի դաստիարակության, կրթության գեղագիտական և բարոյական, ինչու չէ նաև պատմական՝ անցյալը իմանալու, գնահատելու, և սովորելու տեսակետից, հրաշալի դասեր են և հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխահը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքի սաների մոտ ազգային մշակույթի նկատմամբ կայուն հետաքրքրություն ձևավորելու համար անհրաժեշտ է նրանց ծանոթացնել օրացույցային տոներին, ծեսերին, ավանդույթներին, արվեստին և արհեստներին:

Ազգային տոներն օգնում են սաներին զարգացնել ստեղծագործական կարողունակությունները: Այս տոները պատկերացում են տալիս ժողովրդական, հավատալիքների, ավանդական ծեսերի, հայ գյուղացու առօրյայի մասին: Նրանք սովորեցնում են նուրբ վերաբերմունք բնության, իրենց նախնիների և ժողովրդի պատմության նկատմամբ:

Պարապունքները պետք է կազմակերպել այնպես, որ սաները քայլ առ քայլ, համապատասխան միջավայրում արդյունավետ գործունեությամբ իրենց լիարժեք մասնակցությամբ, ձեռք բերած կարողունակությունների, և հմտությունների միջոցով յուրացնեն յուրաքանչյուր ազգային տոն և ծես: Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել ամեն տեսակի բանահյուսություն (հեքիաթներ, երգեր, մանկական ոտանավորներ, հմայություններ, ասացվածքներ, հանելուկներ, պարեր), քանի որ բանահյուսությունը երեխաների ճանաչողական և բարոյական զարգացման ամենակարևոր աղբյուրն է:

Մանկական ազգային տոներն ու հանդեսները նախադպրոցական տարիքի սաների համար շատ պահանջարկ ունեցող նյութերն են, որոնք զարգացնում են գեղարվեստախոսքային մշակույթը:

Մանկավարժական այս խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում են դաստիարակները՝ հաշվի առնելով տվյալ խմբի սաների անհատական, հոգեբանական, առանձնահատկությունները և կարիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Մարության, Ա. Դալլաքյան, «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք: Երևան 2008թ.:
2. Ս. Մարության, «Նախադպրոցականի ինքնուրույն դաստիարակումը միջանձնային հարաբերություններում» Երևան 2008թ.:
3. Հ. Միտոյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2020թ., էջ 7-10:
4. Ս. Մարության, «Հասակակիցների հետ հաղորդակցման հմտությունների զարգացումը նախադպրոցական տարիքում»:
5. «Նախաշավիղ ամսագիր»,1-2 2004թ.
6. Галигузова Л.Н. «Межличностные отношения от рождения до семи лет», Воронеж 2013г.:

Հանդեսներ և տոնակատարություններ

Ավագ նախադպրոցական խումբ 2022 թվական



ԽՈՍՔ

Ուզում եմ շնորհակալություն հայտնել <<Հովակիմյան Գրուպ>>-ին ի դեմս՝ վերապատրաստման ղեկավար տիկին Կարինե Հովակիմյանին, ինչպես նաև ողջ դասախոսական կազմին, սուցաբերած բարձր պրոֆեսիոնալիզմի, համբերատար վերաբերմունքի և իրենց գիտելիքները անմնացորդ վերապատրաստվողներին փոխանցելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում նաև երաժշտության դասախոս տիկին Նարինե Սահակյանին, ով իր ողջ ստեղծագործական մտքի շտեմարանը տրամադրեց մեզ՝ տալով նոր գիտելիքներ, նոր մոտեցումներ աշխատանքային պրոցեսում: Դասընթացավարի շնորհիվ սովորեցինք նորամուծություններ պարապունքների ժամանակ: Որոնցից կնշեմ՝ <<Երաժշտական Փազլ>>-ը երկրաչափական պատկերներով երգ-խաղը: Եվ ես ավելի քան վստահ եմ, որ մեր ստացած գիտելիքների կիրառումը աշխատանքային պրոցեսում էլ ավելի արդյունավետ կդարձնի մեր աշխատանքային գործունեությունը և կնպաստի մանկապարտեզի սաների բազմակողմանի զարգացմանը և կարողունակությունների ընդլայնմանը:

Շմնորհակալություն Ձեզ՝ բոլորից սիրելի դասախոսներ և կազմակերպիչներ արդյունավետ աշխատանքային գործունեության համար: